ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/01 ծածկագրով բաց մրցույթի գնման ընթացակարգի հայտերի բացման նիստի

Գավառ, Կենտրոնական հրապարակ 7 **«21» «03» 2018թ.**
ժ 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Արմեն Զոհրաբյան /ԳԱՊ/,
Հանձնաժողովի անդամներ Յուրա Մուշեղյան /ԲԱ/, Գևորգ Խաչատրյան/ԳԱ/,
Վալեր Հոդաբաշլան/ԲԱ/,Գուրգեն Մելքոնյան/ԳԱ/
Հանձնաժողովի քարտուղար՝ Արթուր Բաղեյան/ՄՀՄ/

1. Հայտերը բացվել են armeps համակարգի միջոցով 2018թ. մարտի 21-ին՝ ժամը 11:00-ին:
2. Գնման ընթացակարգին հայտ են ներկայացրել հետևյալ մասնակիցները:

h/h	Մասնակցի անվանումը
1	<<ԳԱԶԿՈՄՇԻՆ>> ՍՊԸ
2	<<ԱՐՍԵՎ>> ՍՊԸ
3	<<Հիդրովերանորոգում>> ՍՊԸ
4	<<Եվրոպա>> ՍՊԸ
5	<<Էլդոգար>> ՍՊԸ
6	<<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ

3. Բոլոր մասնակիցների հայտերում հրավերով պահանջվող փաստաթղթերը առկա են:

4. Տվյալներ մասնակիցների կողմից ներկայացված հայտերի հրավերի պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին.

h/h	Մասնակցի անվանումը	Հրավերի պահանջներին համապատասխանությունը
1	<<ԳԱԶԿՈՄՇԻՆ>> ՍՊԸ	Հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին
2	<<ԱՐՍԵՎ>> ՍՊԸ	Հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին
3	<<Հիդրովերանորոգում>> ՍՊԸ	Հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին
4	<<Եվրոպա>> ՍՊԸ	Հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին
5	<<Էլդոգար>> ՍՊԸ	Հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին
6	<<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ	Հայտը չի համապատասխանում հրավերի պահանջներին

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի դրույթներով՝ գնահատող հանձնաժողովը որոշեց՝

մերժել <<ԳԱԶԿՈՄՇԻՆ>> ՍՊԸ-ի, <<ԱՐՍԵՎ>> ՍՊԸ-ի, <<Հիդրովերանորոգում>> ՍՊԸ-ի, <<Եվրոպա>> ՍՊԸ-ի, <<Էլդոգար>> ՍՊԸ-ի և <<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ ներկայացրած հայտերը հետևյալ հիմնավորմամբ՝

- <<ԳԱԶԿՈՄՇԻՆ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման՝ բանկային երաշխիքի, մեջ որպես բենեֆիցիար նշված է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան, սակայն պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների գործարքների դեպքում՝ որպես բենեֆիցիար պետք է նշվեր Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը:

- <<ԱՐՍԵԿ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման բանկային երաշխիքի, մեջ որպես բենեֆիցիար նշված է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան, սակայն պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների գործարքների դեպքում՝ որպես բենեֆիցիար պետք է նշվեր Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը:
Միաժամանակ բանկային երաշխիքի վավերականության ժամկետը չի համապատասխանում հրավերի 7.4 կետին, որով սահմանված է, որ հայտի ապահովումը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր:

- <<Գևորգյան և Ներսիսյան>> կողմից ներկայացված հայտի ապահովման՝ բանկային երաշխիքի, մեջ որպես բենեֆիցիար նշված է ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան, սակայն պետության համար պարտավորություններ առաջացնող գնումների գործարքների դեպքում՝ որպես բենեֆիցիար պետք է նշվեր Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը:

- <<Էլդոգար>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի ապահովման՝ վճարման հանձնարարագրի մեջ <<շահառու>> դաշտը լրացված չէ, իսկ <<նպատակ>> դաշտում հայտի ապահովման փոխարեն լրացված է պայմանագրի ապահովում:

- <<Եվրոպա>> ՍՊԸ-ի կողմից հայտի ապահովումը ներկայացված է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով: Համաձայն ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի դրույթների՝ եթե մասնակիցի գնային առաջարկը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա հայտի ապահովումը պետք է ներկայացներ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

- <<Հիդրովերանորոգում>> ՍՊԸ-ի կողմից հայտի ապահովումը ներկայացված է միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով: Համաձայն ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 32-րդ կետի 9-րդ ենթակետի դրույթների՝ եթե մասնակիցի գնային առաջարկը գերազանցում է գնումների բազային միավորի յոթանասունապատիկը, ապա հայտի ապահովումը պետք է ներկայացներ բանկային երաշխիքի կամ կանխիկ փողի ձևով:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

5. Գնահատող հանձնաժողովը որոշեց.

Ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետով՝ ՀՀ ԳՄ ԲՄԱՇՁԲ-18/01 ծածկագրով բաց մրցույթի գնման ընթացակարգը հայտարարել չկայացած, քանի որ հայտերից ոչ մեկը չի համապատասխանում հրավերի պայմաններին:

Ղեկավարվելով <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներով՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկագրում հրապարակել հայտարարություն՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու վերաբերյալ:

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 29-րդ կետի դրույթներով՝ գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու օրվան հաջորդող օրը հանձնաժողովը համարել լուծարված:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

6. Ընդունել ի գիտություն, որ հայտերի վերաբերյալ հարցումներ և պարզաբանումներ չեն եղել

. Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Նախագահ՝ _____ Ա. Զոհրաբյան

Անդամներ՝ _____ Յու. Մուշեղյան

_____ Գ. Խաչատրյան

_____ Վ. Հոդաբաշյան

_____ Գ. Մելքոնյան

Քարտուղար՝ _____ Ա.Բաղեյան